

արտահայտվում է հոգուս լեզու՝ հարավորությունների, մասնավորապես դամալի ամբիոնի ազատագործման, «Բարու» փորձիկ հոգվածում նա զույց է տալիս Բարվի մենչեթկների կողմադրություն, պատակադական գործունեությունը:

«Նշելումսյա արտը և փախուստ» հոգվածում նկարագրվում է նախկին Տորոսկի Կահնգի վիճակի Կնուսյանցը մեծ շերտությունը ու երախտագիտությունը և խոսում տեղական բնակչության հյուրընկալություն և արտադրությունների նկատմամբ ջույց արված հոգաաարություն մասին: Նա գրում է, «Չնայած մեր՝ իրավադուրիկ արտադրանքներին և աղմինխտադրայի կողմից հատկապես շարամիտ «Հանգագործներ» մանաշվածներին բացառիկ գրությունը, տեղական բնակիչները նայում էին մեզ որպես քանկալի հյուրերի և անում էին իրենցից կախված ամեն բան, մեր արտորթ թեթևացնելու համար» (էջ 333): Կնուսյանցը նշում է, որ տեղական բնակչությունը թշնամաբար է արամագրված ցարիզմի դեմ: «Արտադրություններն, — գրում է Կնուսյանցը, — գիմադորում են որպես բարեկամներ, Կառավարության թշնամիներին՝ որպես ժողովրդական գործի խնկական պաշտպաններ» (էջ 339):

1907 թվականին, Շտուտգարգում, Բողզան Կնուսյանցը 37 բուլչեթկ պատվիրակների հետ միասին, Վ. Բ. Անիթի գլխավորությամբ, մասնակցում է II Բնակչության VII կոնգրեսի աշխատանքներին: Այդ կոնգրեսի աշխատանքներին, ուղարկում էր Վ. Բ. Անիթի ղեկավարությամբ և Լուսինի մզած պայքարին է նվիրված Բողզան Կնուսյանցի «Նոր բնակչության VII կոնգ-

րեսը» հոգվածը, որը լույս է տեսել Թեհրան հրատարակվող «ՄԱՅՄԱՆ» բուլչեթկյան ամսագրում:

Մի շարք հոգվածներ («Դարեյա» «Խորհրդականության մասին», «Իսկական սոցիալիստները և խորհրդականությունը», «Խորհրդականության մասին», «Լիազորյալների խորհուրդը և երաշխիքները») նվիրված են Բարվի բուլչեթկների պայքարին հանուն բանվորների և նավթադրամադրությունների խորհրդական կամպանիայի ազատագործման՝ պրոլետարիատի վիճակը բարելավելու համար: Այս հոգվածներում Կնուսյանցը մերկացնում է պաշտակների, մենչեթկների և Լուսինի պատակադական կազմաշուկի գործունեությունը, պարսիկները, որոնք զնադողիկ կերպով հանդես էին գալիս ընդդեմ խորհրդականության նավթադրամադրությունների հետ: Կնուսյանցը գրում է, որ խորհրդականությունը կոզնի պրոլետարիատին կազմակերպվել, իսկ «կազմակերպված պրոլետարիատը պաշտակության նման հաստատությունների ամենառիթմի թշնամին է» (էջ 421): Ժողովածուն ավարտվում է «Ազադ Չեղդակ» մահախոսականով, նվիրված 25-ամյա նավատորմի ռուսացիներին: Դա Կնուսյանցի վերջին հոգվածն էր՝ գրված Բարվի բանաի հիվանդանոցում:

Բ. Կնուսյանցի Ընտիր երկերի ժողովածուն, որն արտացոլում է լենինյան հին գվարդիայի տկանավոր երկաշարացիներից մեկի կյանքն ու ռեպուտացիոն-հրապարակախոսական գործունեությունը, հետաքրքրությամբ կընդունվի բնթերջագետների կողմից:

Գ. ԶԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Մ. ՄԵԼԻՔԱՆՅԱՆ, «Հյուսիսային լի» ամսագիրը, Ն. Կանի Պետական համալսարանի հրատարակչություն, 1958, 261 էջ:

Հայ պարբերական մամուլի հարուստ, բայց տակավին քիչ հետազոտված պատմության ուսումնասիրությունը, անտարակույս, արժանի է խրախուսանքի: Այս առումով էլ շնորհակալությամբ և կատարել բանասիրական գիտությունների թեկնածու Մարգո Մխիթարյանը, հրատարակելով «Հյուսիսային» նվիրված իր ուսումնասիրությունը:

«Հյուսիսային» առնչվող հարցերը շատ առիթներով են պարզաբանվել: Ամսագիրը, նրա աշխատակիցները գրականության պատմության մեջ իրենց արժանի գնահատական են ստացել: Սակայն, չնայած դրան, «Հյուսիսային» մասին առանձին ուսումնասիրություն դեռևս չի հրատարակվել: Մինչև այժմ հանգամանորեն չի գուտաբանվել «Հյուսիսային» պատմությունը,

չի պարզաբանվել նրա գիրքը ժամանակի մի ամբողջ շարք հրատապ հարցերում, չի որոշվել նրա տեղն ու արժեքը հայ ազատագրական մտքի, հայ գրականության և մամուլի պատմության մեջ: Այդպիսի մի լուրջ փորձ առաջին անգամ ձեռնարկել է Մ. Մխիթարյանը՝ «Հյուսիսային» առանձին մենագրություն նվիրելով:

Գիրքը ծավալուն է՝ 261 էջ, բաղկացած է հինգ գլուխներից, ունի առաջաբան: Գրքին կցված հավելվածում զետեղված են երեք փաստաթղթեր, որոնք առաջին անգամ են հրատարակվում: Հեղինակն իր աշխատությունը գրելիս լայնորեն օգտագործել է անցյալ դարի հայ, ինչպես նաև 60-ական թվականների ռուսական պարբերական մամուլն ու դրան նվիրված որոշ

ուսումնասիրություններ, նրանի, Քբիլիսիի և Լենինգրադի մի շարք արխիվներից վերցված փաստաթղթեր:

Մ. Մխիթարյանն իր աշխատության առաջին գլխում, որը կրում է «Հյուսիսափայլի» հիմնադրման պատմությունը՝ վերնագրեր, համառոտակի կանգ է առնում մինչհյուսիսափայլյան շրջանի հայ մամուլի պատմության վրա: «Հյուսիսափայլի» հիմնադրումն ու հրատարակումը հեղինակն իրավամբ կապում է հայկական իրականության, ինչպես նաև ժամանակի կարևոր իրադարձությունների, տնտեսական-քաղաքական հարաբերությունների դարձացման հետ:

Հեղինակը պարզ պատկերացում է ապիս նաև ամսագրի հրատարակման համար նախադրյալի և նրա համախոհների կատարած առաջին քայլերի մասին, վեր է լուծում «Հյուսիսափայլի» անդրանիկ համարը, կանգ առնում այն սկզբունքների վրա, որոնք կազմում էին նորաստեղծ ամսագրի ծրագիրը:

Ինչո՞վ էր տարբերվում նորաստեղծ ամսագիրը իր ժամանակի մյուս պարբերականներից, ինչ փոխհարաբերության մեջ էր նա մյուս թերթերի ու ամսագրերի հետ, ինչպե՞ս է ընդունվել նրա հրապարակ գալու: Այս հարցերի պատասխանն է պարունակում աշխատության հաջորդ՝ «Երևանի թվականների արևիկահայ պարբերական մամուլը և «Հյուսիսափայլը» գլուխը Էնդիանի առաջին հերթին կանգ է առնում «Ճաքադի» (1858—1862) վրա, որը հայտնի է իրեն կղերա-ֆեոդալական ուղղության ամսագիր: Ինչևիցե ժամանակի սրբազանիվ օրգանը, «Հյուսիսափայլը» չէր կարող չհակադրվել ցարկի և կալվածատիրության ուսուցիչ թագավորականությունը ջառագովոյ ալո օրգանին, որի բռնած գիրքը բոլոր արմատական հարցերում դիմադարձ էր սկիզբ առնող նոր առաջագիմական դադափարախոսությանը: Եվ ահա «Ճաքադի» և նրա խմբագիրներ Մսեր և Զարմուշը Մսերյանները սուր են ձեռնում «Հյուսիսափայլի» և նրա աշխատակիցների դեմ: Կղերա-ֆեոդալական հոսանքի ներկայացուցիչները իրենց օրգանը դարձնում են հյուսիսափայլյան ուղղության դեմ պայքարի ասպարեզ:

Փաստական նյութի հիման վրա է ցույց տրվում նաև «Մեկու շալաստանի» (1858—1886) և կղերա-ֆեոդալական հոսանքի պարագլուխներից մեկի, ցարական կառավարության վրասառությունը վայելող՝ Գաբրիել վարդապետ Այվազովսկու և նրա խմբագրած «Մասյաց ազգանի» (1855—1865) ամսագրի պայքարը «Հյուսիսափայլի» դեմ: Ընդունվել է ընդգծում հեղինակն այն միտքը, որ «իր շուրջը համախմբելով հայ ուսուցիչն օրգաններ, «Ճաքադի»,

«Մեկու շալաստանի», Այվազովսկին կապում է մի յուրօրինակ ժողովրդային «արխիվ-վերստ», և այն ուղղում պրոգրեսիվ մամուլի և գործիչների դեմ, դարձնում ցարական միապետությանը փառարանելու գործիք: Կենդանի հայ իրականությանից հեռու մնալով, Այվազովսկին և նրա ամսագիրը հրապարակաշուքն և դադանի կերպով կատաղի և սուր պայքար են ծավալում հայ առաջագիմական մտքի դեմ:

Այվազովսկու պայքարը գլխավորապես ուղղված էր Մխիթարյան Նալբանդյանի դեմ: Վճռականորեն պատվելով Նալբանդյանի դավանած ուղղությունից, Նալբանդյանը կրթության կերպով մերկացնում էր ուսուցիչն ուղղության հայ ներկայացուցիչներին: Ահա ինչու Այվազովսկին գիտում է ամեն միջոցի, ձեռնարկում ամեն հնարավոր, որպեսզի «Հյուսիսափայլը» փակել տա: Նա ամբաստանագրեր է գրում ներքին գործերի մինիստրին, առաջարկում «չարամիտ և անհանգիստ» Նալբանդյանին պատեկ օրերի ամբողջ խոստովյալ: Իր նպատակներին հասնելու համար Այվազովսկին իր շուրջն է համախմբում կովկասահայ և մոսկովահայ ուսուցիչներին: Այս կապակցությամբ Մ. Մխիթարյանը հետաքրքրական փաստեր է բերում: Նա բնութագրերին ծանոթացնում է Մսերյանների արխիվում պահվող «Արշալույս Արարոտյան» (Հայկունիա) թերթի հրատարակիչ-խմբագիր Դուխան Գ. Պաղպարյանի նամակներին, որոնք լույս են տեսնում Այվազովսկու ու նրա արատաշանջան համախոհների կապերի վրա: Հեղինակը մասնանշում է նաև կղերա-ֆեոդալական հոսանքի մի այլ ներկայացուցիչ (արևմուտքում)՝ Չամուրեանի կատարյալ պայքարը դեմոկրատական և լիբերալ հոսանքների ներկայացուցիչների, մասնավորապես Նալբանդյանի դեմ:

Այսպիսով, հեղինակին հաջողվում է փաստական հարուստ նյութերով բնութագրել ցույց տալ գեմոկրատական հայացքների դեմ 60-ական թվականների ուսուցիչն մամուլի ծավալած պայքարը, ճիշտ պատկերացում ստեղծել այն գիրքի և ուղղության մասին, որ բռնել էին այդ պայքարում «Հյուսիսափայլը» ու Նալբանդյանը:

Հարուստ փաստական նյութ է պարունակում աշխատության հաջորդ գլուխը, բնագրածակ ոչ միայն իր ծավալով, այլև բնագրված հարցերի շրջանակով: Այստեղ հեղինակը անդրադառնում է հայ իրականության այն բաղադրված հրատարակիչ մի քանիսին, որոնք արձանագրել են «Հյուսիսափայլում»: Նա մասնավորապես կանգ է առնում լեզվի, դպրոցի և դաստիարակության հարցերի ընտրված, գրաքննադատական մտքի ծավալման, բնական գիտություն-

ների պրոպագանդայի և կանանց հարցի լուսաբանման վրա, ինչպես նաև բնութագրում է ամսագրի գեղարվեստական արձակը, պոեզիան և թարգմանական բաժինը: Այս գլխում արժեքավորն այն է, որ առաջին անգամ փորձ է արված խմբավորել «Հյուսիսսովայի» բազմազան նյութերը, դրանք վերլուծել ըստ թեմատիկայի և ընթերցողին պատկերացում տալ 50—60-ական թվականների մտավոր կյանքի համար կարևոր այդ հարցերում ամսագրի և նրա գլխավոր աշխատակիցների բռնած դիրքի մասին: Հեղինակը հենվել է ոչ միայն ամսագրի նյութերի վրա, այլև օգտագործել է Մ. Նալբանդյանի Մտ. Նազարյանի հարուստ ժառանգությունը, ինչպես նաև սովյալ հարցերի հետ առնչվող գրականությունն ու մամուլը: Հատկապես լավ է ներկայացված արձատական հարցերում ամսագրի երկու գլխավոր աշխատակիցների՝ Սո. Նազարյանի և Մ. Նալբանդյանի հայացքների տարբերությունը, նրանց բախումները: Ըստ որում հեղինակը միավորմանի մոտեցում չի ցուցաբերում՝ Նազարյանի նկատմամբ, ինչպես անշուշտ ոմանելու նա լուսավորիչ Նազարյանի հայացքներում ընդգծում է այն, ինչ գրական, բնագոյնի, առաջադիմական է և բնագոյնում այն, ինչ մերժելի է, հետադիմական: Հեղինակը գուցա հեռավոր անգրագետներում է ամսագրի մյուս աշխատակիցների հայացքներին, հնարավորին չափով մեկնաբանում դրանք:

Առանձնապես պետք է շեշտել «Գրա-քննադատական միտքը «Հյուսիսսովայի» կշեռում» հատվածը, որն ուշադրում է թե՛ տեսական ընդհանրացումներին, և թե՛ իր ընդգրկած նյութերով: Հեղինակը միանգամայն իրավացի է, երբ ընդգծում է հայ գրականության մեջ լուրջ դարձրած հարցերում ստեղծելու գործում ամսագրի և նրա գլխավոր աշխատակցի՝ Մ. Նալբանդյանի կատարած մեծ, հիմնարարական դերը:

Ուսումնասիրության հաջողված գլուխներից պետք է համարել նաև «Նալբանդյանը և «Հյուսիսսովայի» գլուխը: Ռեդիկացիոն-գեմոկրատի «Հյուսիսսովայում» կատարած հոկայական գերի վրա հետադարձությունը շատ են կանգ առել: Բայց, շնայած դրան, հեղինակին հաջողվել է Նալբանդյանի հյուսիսսովայական շրջանին մոտենալ մի նոր կողմից, նոր փաստերով ու մեկնաբանություններով ցույց տալ, որ «Նալբանդյանը «Հյուսիսսովայի» ամբիոնն օգտագործում է ծառայելու համար հայ ժողովրդի «ճեղքայի բարվոքման և ապագայի լավության» գործին, և այս տեսանկյունից էլ անհաշտ պայքար է ծավալում բոլոր նրանց դեմ, ովքեր խանգարում են այդ ծրագրի իրականացմանը» (էջ 187): Հեղինակն առաջին հերթին անդրա-

դառնում է «Հիշատակարանին», որը, հեղինակի՝ Նալբանդյանի խոսքերով ասած, իր մեջ բովանդակում է «ամեն մի հայ մարդու սրտի և հոգու մոտ բաներ, խնդիրներ, որ հարակցություն և ազդեցություն ունեն մեր ազգի կյանքի վերա» («Հյուսիսսովայի», 1859, № 8, էջ 648): Իր հրապարակախոսական գործունեության ընթացքում Նալբանդյանը ղեկավարվում էր ճշմարտությունն ուղիղ ասելու, իրականությունը առանց գունավորման ներկայացնելու, պայքարի մեջ ոչ թե անձնական թշնամիներ, այլ ազգի դեմ պայքարողներ տեսնելու սկզբունքներով: Այդ երակետից նա բանակրել էր մյուս Մանդինյանի, Մ. Իսահակյանի, Հ. Չեքերզյանի, («Մեղու Հայաստանի»), Գ. Ալվազովսկու («Մոսկովյան աղավնի»), Մանրյանների («Ճառքաղ») և ուրիշների դեմ:

Ընդգծելով Նալբանդյանի բանավիճակին հույսածների գաղափարական հազեցվածությունը, Մխիթարյանը միաժամանակ ցույց է տալիս, որ դրանք աչքի են ընկնում անմիջականության մեջ, կրուտ տրամաբանության մեջ, սուր երգիծանքով, լեզվի պատկերավորությամբ, բնագոյն-բացումներով, վարպետ կոտուցվածքով, ռուս ռեդիկացիոն-գեմոկրատների գաղափարական պայքարի միջոցները օգտագործելու հմտություններ:

Աշխատության հինգերորդ գլուխը՝ «Նալբանդյանը և նրանով, որ աշխատելու առաջին անգամն է պարզաբանվում Սո. Նազարյանի գոտ իմբագրական գործունեությունը, խոսվում նրա որպես «խմբագրի ծանր ու դժվարին աշխատանքի» մասին: Հեղինակն իրավամբ մատնանշում է, որ Նազարյանի իբրև խմբագիր «իր վառատակով ուրույն և պատվավոր տեղ է գրավում մեր հրապարակախոսության պատմության մեջ: Նրա նվիրվածությունը, հաստատակամությունն ու աշխատասիրությունը, անաշատությունը՝ պատիվ կարող էին բերել ամեն մի խմբագրի» (էջ 209): Իր այս եզրակացությունը հեղինակը հիմնավորում է շատ փաստերով ու օրինակներով: Նազարյանը գործիմաց խմբագիր էր, անաշատ ու անկողմնապահ, ձգտում էր հասնել տպագրվելիք նյութերի ճշմարտացիությանը, կապ հաստատել ընթերցող հասարակության հետ: Մխիթարյանը մի շարք փաստերով հակադրում է իշխող այն կարծիքին, թե «Հյուսիսսովայի» հեռու էր ժողովրդի կյանքը պատկերելուց, որ իբրև նա չի ճանաչել այն, իսկ Նալբանդյանը եղել է սոսկ կարինետային գործիչ:

Այս գլխում բերված հարուստ նյութերն ու ճիշտ մեկնաբանությունները ընթերցողին հանգեցնում են այն կարծիքին, որ «Ստեփանոս

նազարյանի հրապարակախոսական գործունեությունը պատմականորեն ունեցել է առաջադիմական նշանակություն: Նրա խմբագրած «Հյուսիսափայլը» նոր երևույթ էր իր ժամանակի հայ իրականության մեջ և կատարել է առաջադիմական դեր» (Լջ 232):

Գրախոսվող աշխատությունը, սակայն, գերծ չէ թերություններից: Դրանք մասամբ հետևանք են այն բանի, որ հեղինակը անցել է գրեթե չտրորված ուղիով: Աշխատության թերություններից նախ և առաջ պետք է նշել ընդհանրացումների և եզրակացությունների քիչ լինելը: Աշխատությունը ընթերցողի վրա այն տպավորություն է թողնում, որ նրա հեղինակը առանձին դեպքերում նույնիսկ խուսափել է իր եզրակացություններն անելուց, ավելի շատ ձեռք տել է փաստերը շարադրել, քան փորձել դրանք ընդհանրացնել և դրանցից հետևություններ անել: Այս թերությունը այս կամ այն չափով բնորոշ է աշխատության համարյա բոլոր գլուխներին:

Այս առումով թերի պետք է համարել աշխատության առաջարանը և լուրջ բաց՝ եզրափակիչ գլխի բացակայությունը: Առաջարանում փոխանակ համառոտակի արժեքավորելու իր ուսումնասիրության առարկան, լուսարանելու մենագրության նպատակը, ցույց տալու այն տարբերությունը, որ ունի իր աշխատանքը նախնադանագիտության և «Հյուսիսափայլին» անդրադարձած մյուս աշխատություններից, հեղինակն ավելի շատ խոսում է այն մասին, թե հայ աշխատավոր գործընկերներն ու գործիչներն ինչ կարծիքներ են հայտնել ամսագրի մասին:

Եզրափակիչ գլխի բացակայությունն առավելապես զգալի է, որովհետև հեղինակն առանձին գլուխների վերջում ընդհանրացումներ չի արել, համառոտակի չի ամփոփել տվյալ գլխում շարադրված նյութը:

Թվում է, անհրաժեշտ էր առանձին գլուխ նվիրել «Հյուսիսափայլի» ունեցած դերին՝ հայ հասարակական մտքի զարգացման պատմության մեջ: Ընդհանուր առմամբ, այդ մասին խոսվում է գրքի զանազան տեղերում, բայց նպատակահարմար կլիներ դրանք ի մի բերել և ավելի հանգամանորեն կանգ առնել այդ հարցի վրա: Մասնավորապես հարկավոր էր ցույց տալ, որ «Հյուսիսափայլը» որոշ իմաստով ունեցել է իր նախորդները (օրինակ, Մ. Ոսկանի պարբերականները): Չէ որ, ինչպես նկատում է Աշ. Հովհաննիսյանը, «1858 թ. Մոսկվայում հիմնադրված «Հյուսիսափայլը» հանդիսանում էր սլոբոդնիկ հրապարակախոսության հաջորդ, առավել կոթովամիտ և արդասավոր օրդանը» (Նախնադանը և նրա ժամանակը» հ. 1, Լջ 132):

Մ. Մխիթարյանի աշխատությունը լույս է տեսել «Հյուսիսափայլի» հրապարակ դալուց հարյուր տարի հետո: Այդ հանգամանքը պարտադրեցնում էր հեղինակին ցույց տալու, թե նա ինչ ազդեցություն է ունեցել հայ հետադարձ երանկանների վրա, նրա որ տրագիկաներն են շարունակվել, զարգացվել հայ մամուլում: Բավական չի ասել, թե «Մտ. Նախնադանի ամսագրի լավագույն տրագիկանները հետադաժում յուրացրին հայ առաջավոր գործիչները» (Լջ 233): Այդ թերի հայտարարությունը նախ պետք է լրացնել, ապա անպայմանորեն հիմնավորել կոնկրետ փաստերով և օրինակներով: Ընդհանրապես հեղինակը քիչ է անդրադառնում նախնադանի և «Հյուսիսափայլի» համախոհների հարցին: Հազվադեպ է խոսում նրանց վրա նրա թողած ազդեցության մասին: Որոշ տեղերում (Լջ 80—82, 84—85 և այլն) այդ մասին ասվածը շատ քիչ է:

Ինչպես նշվեց, «Նախնադանը և «Հյուսիսափայլը» գլուխն ընդհանուր առմամբ հաջողված է, բայց ընթերցողին լիակատար չի ներկայացված Նախնադան-ժուռնալիստի ամբողջական, վառ կերպարը: Քսաներկու տարեկան հասակից կապվելով մամուլին, իր կարճատև կյանքի ընթացքում նախնադանը հսկայական հրապարակախոսական աշխատանք է ծավալել: «Հյուսիսափայլին» աշխատակցելու երկու և կես տարիների ընթացքում նա կանգնած էր հայ ժուռնալիստական ճակատի առաջագծում: Ուղղակի հրապարակախոսական խոսքը նրա տաղանդավոր գրչի տակ ստանում էր դրամատիկական պատկերի, ակնարկի, պատմվածքի ուժ: Իր ստեղծագործություններում կոնկրետ անձնավորություններն ընդունելով իրեն նախատիպ, նա կերտել է զեղարվեստորեն ընդհանրացված կերպարներ: Ուշագիտ է համար ուսումնասիրությունը, հետադարձ պրպտումները շատ բան կարող են տալ նախնադանի ամբողջ գրական ժառանգության մեջ տեղ գտած ժուռնալիստական մոտիվների վերաբերյալ: Մխիթարյանը շնորհակալ դուրս արած կլինի, եթե շարունակի իր աշխատանքը և դնա հենց այդ, դեռևս չթացված, ուղիով: Թվում է նույնը կարելի է ասել նաև «Նախնադանը խմբագիր» գլխի մասին:

Առանձին հարցերի շուրջը իր ձեռքի տակ եղած նյութը շարադրելով, հեղինակը հոգ չի տարել այն մասին, որ ընթերցողը կամա թե ակամա սխալ ենթադրության չհանգիստ խոսքն առաջին հերթին ամսագրի նկատմամբ ցարական կառավարության և դարձնության բռնած դիրքի ճիշտ և հստակ բնորոշման անհրաժեշտություն մասին է:

ճարակուն կառավարությունը հայտնի դիտավորություններով ընդառաջ էր գնում ամսագրի հրատարակմանը, իսկ առանձին անձինք նույնիսկ նպաստում էին (տե՛ս էջ 31—34 և 37)։ Դրան ավելացնենք նաև այն, որ ամսագրի 1860 թ. № 10-ի առթիվ կղերա-ֆեոդալական լազերի հայ ներկայացուցիչների և էջմիածնի Սինոդի բռնած ծայրահեղ դիրքը (բռնագրավել «Հյուսիսասիայը» ամսագրի այդ համարը) և հռանդուն ջանքերը բախվեցին ցարական կառավարության, հանձին՝ նրա գրաքննական գրվարավոր վարչության, համեմատաբար, սառը վերաբերմունքին և ավարտվեցին գրաքննիչի զգուշացմամբ ու նազարյանին հիշեցում անելով։ Այս ամենի առթիվ ընթերցողի մոտ այն տպավորությունն է առաջանում, թե ցարական կառավարությունը կարծես թե հովանավորողի ձևով է մեկնում «Հյուսիսասիային»։ Դրանից այն օրինական հարցն է առաջանում, թե արդյոք «Հյուսիսասիայը» արդարացի է ցարական կառավարության փայփայած հույսերը, ամսագիրն իր ո՞ր «ծառայություններին» համար էր օժանդակություն ստանում, ինչպե՞ս համատեղել այդ տպավորությունն այն բանի հետ, որ ամսագիրը նախնադրյանի շնորհիվ փաստորեն դարձել էր ռեզուցիոն-դեմոկրատական գաղափարների տրիբունա, արձատական ուղղության օրգան, որ նախնադրյանը արտահայտել է այնպիսի գաղափարներ, որոնց համար նա թանկ է վճարել։ Այս բնույթի տարակուսանքների տեղիք չտալու համար Մխիթարյանը պետք է չհշտը դնեն ցարական կառավարության բռնած թշնամական դիրքի վրա և փորձեն ցույց տալ, հիմնավորել այն աներկբա տեսակետը, որ «Հյուսիսասիայը» երբեք չէր կարող ցանկալի օրդան լինել ռեակցիոն ուղղության ներկայացուցիչների համար թե՛ հայ, և թե՛ ռուսաբան իրականության մեջ։

Աշխատության մեջ կան այնպիսի դիտողություններ, որոնց հետ չի կարելի համաձայնվել։ Ահա այդպիսի մի օրինակ։ Գրքի 10-րդ էջում հեղինակը գրում է. «1858 թվականին ոչ մի խոսքով չարձագանքելով և՛ Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի հրատարակությանը, «Բազմավեպը» մեծ ուշադրություն է դարձնում նույն թվականին հրատարակված Ա. Բաղրատունու «Հայկ Դյուցազն» ստեղծագործության վրա»։ Ինչպես հայտնի է Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի լույս է տեսել միայն 1858 թ. օգոստոսին, Թիֆլիսում։ Ինչպե՞ս կարող էր Վենետիկում լույս տեսնող «Բազմավեպը» հենց այդ նույն թվականին արձագանքել վեպի հրատարակությանը։ Նման հարցադրումն առավել ևս անհիմն է թվում, եթե հիշենք, որ Մոսկվայում

հրատարակվող «Հյուսիսասիային» այդ վեպին անդրադարձել է հրատարակվելուց մեկ տարի հետո՝ 1859 թվականի սեպտեմբերին (տե՛ս Մ. Նախնադրյանի «Մեռելահարցուկի» տողատակի ծանոթագրությունը, երկերի լիակատար ժողովածու, հ. 1, էջ 279—280)։ Ինչ վերաբերում է «Հայկ Դյուցազնին», ապա այն հրատարակվել է հենց Վենետիկում և թեկուզ այդ պատճառով բոլորովին էլ տարօրինակ չէ, որ այնտեղ լույս տեսնող «Բազմավեպը» անմիջապես անդրադառնար նրան։

Աշխատության առանձին տեղերում հեղինակի փաստարկումները սահմանափակվում են «մեզ թվում է», «հավանաբար», «ենթադրում ենք» արտահայտություններով, որոնք ընթերցողներին քիչ են հավատ ներշնչում։ Իսկ մասնավորապես վերաբերում է 62—65 էջերին։ Հեղինակը պետք է ձգտեր հիմնավորել և ապացուցել իր ենթադրությունները, հավանական կարծիքները։

Գրքի գիտական արժեքի վրա ստվեր է ձգում նաև ծանոթագրությունների բացակայությունը։ Տարօրինակ է, թե ինչու հեղինակն անհրաժեշտ չի համարել գոնե նվազագույն չափով ընթերցողներին ծանոթացնելու այն բազմաթիվ պարբերականներին և գործիչներին, որոնց նա այս կամ այն առիթով անդրադարձել է իր ուսումնասիրության մեջ։ Խիստ անհրաժեշտ էր, օրինակ, համառոտակի տալ Մտ. Նազարյանի կենսագրությունը։ Ծանոթագրված չեն և չեն մեկնաբանված նաև հավելվածում զետեղված փաստաթղթերը, որոնց մասին շատ քիչ բան է ասված նաև բուն տեքստում։ Հեղինակը հրապարակելով այդ փաստաթղթերը, իր խնդիրը պետք է համարել օգնել մասսայական ընթերցողին (գիրքը լույս է տեսել 4000 օրինակ տպաքանակով)՝ ճիշտ հասկանալու և մեկնաբանելու դրանք։

Ի վերջո խիստ դիտողություն պետք է անել գրքի գիտական ապարատի մասին։ Հակառակ գոյություն ունեցող և արդեն արմատավորված կարգի, Պետական համալսարանի հրատարակչությունը այս աշխատությունը լույս է ընծայել առանց անվանացանկի, որը խիստ կերպով դժվարացնում է գրքի օգտագործումը։

Սահմանափակվենք այսքանով։

Մ. Մխիթարյանի «Հյուսիսասիայը» ամսագիրը՝ աշխատությունը առաջին քայլն է հայ պարբերական մամուլի առանձին օրգաններին մենագրական ուսումնասիրություն նվիրելու և հանգամանորեն ուսումնասիրելու գործում։ Եվ այդ օգտակար ու արժեքավոր աշխատությունը անկասկած առավել կշահեր, եթե նրանում տեղ գտած չլինեին նշված թերությունները։

Մ. ՀԱԿՈՐՅԱՆ